



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 4 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԾԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անքուն Պահապանդ է ան:
Արդարեւ ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տէրը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ո՛չ ցերեկ ատեն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ո՛չ ալ լուսինը՝ գիշեր ատեն:
Տէրը ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունէդ դուրս ըլլաա թէ ներս՝ Տէրը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՐԾԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՞ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ է՞ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱԲԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

5:5-7

ԽՈՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅՈՐՈՒՐ (5:5-7)

Այս հապրուածին մէջ Պետրոս Առաքեալ կը խօսի խոնարհութեան մասին: Խոնարհութիւնը բոլորին համար. «**Բոլորդ ալ խոնարհաբար իրարու ծառայեցէք**» (5:5): Հերարքքրական է այն երեւոյթը, երբ այս պարագային Պետրոս Առաքեալ կը խօսի խոնարհութեան մասին, կը նշանակէ թէ այդ օրերուն ապրող ընկերութեան յարկնաշիններէն մէկը չէր խոնարհութիւնը, կամ պակտող քարոյն էր, որուն համար ալ Առաքեալը շեշտը կը դնէ անով ցոյց փալու թէ ինչ կը սպասուի եւ կ'ուզուի քրիստոնէայ անհարկէն ապրելու իր հաւաքքի կեանքը, այդ ալ խոնարհութեան կեանք: Ինչպէս պիտի ըսեր Քրիստոս. «**ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ: Իսկ ով որ կը բարձրացնէ, պիտի խոնարհի**» (Մարթ 23:12): Առաւել եւս, Աստուածաշուքնը կը սորվեցնէ ըսելով. «**Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու փայ**» (Առակ 3:34): Այսօր եւս, ի՞նչպէս կը հասկնանք այս երեւոյթը, եւ ի՞նչպէս կ'ուզենք ըմբռնել:

Ուրեմն, նոյն խոնարհութեան եւ հնազանդութեան ոգիով դուք ալ հնազանդ եղէք ձերերուն (5 հմր): Ինչպէս նախապէս խօսեցաւ Առաքեալը ըսելով. «հնազանդեցէք բոլոր մարդկային իշխանութիւններուն. ծառաներ՝ ձեր փեռերուն: Կիներ՝ ձեր ամուսիններուն: Երիտասարդներ՝ ձերերուն» Աստուծոյ սիրոյն: Այսինքն՝ մեր հնազանդութիւնը Աստուծոյ ցոյց կը փրօւի մեր իրարու նկատմամբ հնազանդութեամբ: Մանաւանդ՝ երիտասարդներ, իրենց գիտութեամբը, իրենց ունեցուածովը հնազանդին իրենց մեծերուն: Պետրոս Առաքեալ նաեւ այնպէս կը բացատրէ խոնարհութեան այս երեւոյթը, որպէս զգեստ ամենօրեայ իրավիճակ: Ինչպէս Պօղոս Առաքեալ պիտի ըսեր. «**Ձեր վրայ առէք Յիսուս Քրիստոսը**», որ կը նշանակէ ամենօրեայ կեանքի ապրելակերպ պէտք է ըլլայ խոնարհութիւնը, եւ ոչ թէ միայն մէկ պահուան մը համար, ինչպէս նաեւ Քրիստոսի նմանակցութիւնը ունենալու իրավիճակը: Ահա գեղեցիկ օրինակը խոնարհութեան եւ ամբարտաւանութեան, որուն օրինակը կու փայ Յիսուս Քրիստոս, Փարիսեցիներ եւ Մաքսաւորը, որոնք Տաճար գացին աղօթելու (Ղուկ 18:9-14): Ահա այսպիսի խոնարհութեան ոգի կրնանք ունենալ, երբ ապաշխարութեամբ Աստուծոյ կը դիմենք, որպէսզի Աստուած ալ մեզի փայ այդ շնորհքը: Խոնարհութեան ոգի կրնանք ունենալ, երբ Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնենք ինչ որ ենք, ինչ որ ունինք: Երբ Աստուծոյ կը վստահինք, Անոր հզօր ձեռքին փակ պաշտպանութիւն կը գտնենք: Ահա խոնարհութեան մասին Պետրոս Առաքեալ կը գրէ նոյնինքն իր ունեցած փորձառութեան լոյսին փակ, երբ կը կարդանք Մարթեոս 26:31-35, որուն մէջ այնքան հպարտութիւն կար, որ նոյնիսկ հակառակեցաւ Քրիստոսի խօսքերուն, ուր կը յիշեցնէր թէ զինք պիտի լքեն: Խոնարհութեան ոգին կրնանք ունենալ երբ աղօթքով կը խնդրենք Քրիստոսէն ըսելու համար, Քեզ նման ըրէ մեզ Տէր, «**Ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ խոնարհ սրտով**» (Մարթ 11:29):

5-6 հմր, որ խոնարհութեան մասին է, որ կը նշանակէ երեւոյթ մը, որ պէտք է ունենանք մեր ամենօրեայ կեանքին մէջ, իսկ 7 հմր, «հոգ» երեւոյթ մը, որ պէտք է դուրս հանենք մեր ամենօրեայ կեանքէն: Պետրոս Առաքեալի ամէն մէկ ուսուցումն ու գրութիւնը ուրիշ բան չեն եթէ ոչ արձագանքը Քրիստոսի ուսուցումներուն. «**Ձեր հոգերը Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ Ինքը կը հոգայ ձեր մասին**» (7 հմր): Նոյնը պիտի ըսէ Քրիստոս (Մարթ 6:24-34): Այսօր մեր ամբողջ կեանքը լեցուն է հոգսերով: Շարժերուս համար, երէկը հոգս է, ուրիշներու համար՝ այսօրը, փակաւին ուրիշներուն համար՝ վաղը, գալիքը, ապագան: Պետրոս Առաքեալ երբ կը խօսի հոգերու մասին, անով ցոյց կու փայ, որ հոգսերը մեզ կը խանգարեն, մեր միտքը կը բաժնէ, եւ մեզ անկայուն վիճակի կը մարմնէ, եւ մեր վախը կը զարգացնէ: Ուրեմն ի՞նչ ընել: Պետրոս Առաքեալ չըսեր հոգ չկայ, կայ: Աստուծոյ ձեռքը փութ: Առաւել եւս, երբ այս նախադասութիւնը դիտենք իրեն նախորդող համարին հետ, երբ Առաքեալը կ'ըսէ. «**Աստուծոյ հզօր ձեռքին փակ խոնարհեցէք**», այն արեւն ամէն ինչ կը փոխուի ներառեալ հոգսերը: Չի նշանակէր, որ ալ հոգսերը չեն ըլլար, այլ Աստուծոյ կը յանձնենք, որովհետեւ Աստուծոյ հզօր ձեռքին փակն ենք: Առնենք թռչիչի օրինակը: Նոյնպէս ալ Աստուած Ինք կը վստահեցնէ մեզի, որովհետեւ մենք Իր միակ մտահոգութիւնն ենք, մեզմով հերարքքրուած: Մէկ այլ ուրիշ օրինակ Մարթեոս եւ Մարիամ (Ղուկ 10:38-41). «**Մարթա, Մարթա, դուն շատ բաներու համար կը մտահոգուիս ու կը նեղուիս**»: Ահա այսպիսի ընկերութիւն մըն է որ այսօր կ'ապրինք լեցուն մտահոգութիւններով, փազնապաներով: Այս բոլորի պատճառը մեր ամբարտաւանութիւնը, հպարտութիւնը, որ երբեք ալ խոնարհելով Աստուծոյ հզօր ձեռքին փակ չենք ըսեր մեր հոգիներուն հանգիստ փութ: Որովհետեւ մեր հոգիները երբեք ալ հանգիստ պիտի չգտնեն, բացի Աստուծոյ մէջ: Մեր կեանքերը իմաստ կը գտնեն Աստուծոյ մէջ, Աստուծմով, այլապէս օրէ օր մտահոգութիւններն պիտի աւելնան: